

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԻ ԳԱ ԼԵզՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

Հայկական ՍՍԻ ԳԱ Լեզվի ինստիտուտը բնականորեն մեկուկես տասնամյակի կյանք ունի, սակայն այսօր նա արդեն դարձել է հայոց լեզվի խնդիրների գիտական մշակման հեղինակավոր կենտրոն։ Ինստիտուտը շարունակ համալիրում է երիտասարդ կադրերով և փորձված գիտական աշխատակիցներով, որոնք զբաղվում են հայոց լեզվի բառարանային, բարակաճանկային կառուցվածքի, նրա պատմության ուսումնասիրության, բարբառների բացահայտման, բառարանագիտության և այլ հարցերով։ Իր ուժերը կենտրոնացնելով հատկապես հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառում, և իր գործունեության ապագա ծրագիրն ու անելիքները մշակելով այդ ուղղությամբ Լեզվի ինստիտուտն արդեն լույս է բնծայել մի շարք գիտական աշխատություններ, որոնք համընդհանուր բնույթի ու ճանաչում են գտել։ Երանցից հիշատակության արժանի են ռուս-հայերեն բառահատոր բառարանը՝ բաղկացած շուրջ 440 մամուլից, մեծ հայագետ Հ. Աճառյանի բարբառագիտական աշխատությունները և առանձնապես նրա համեմատական բերականության շուրջ հատորները, հայագիտական շատ աշխատություններ, որոնք նվիրված լինելով հայոց լեզվի գիտական տարբեր խնդիրներին լուծմանը, ապագայում հիմք են դառնալու մեր լեզվի ակադեմիական բերականության համար։ Այս աշխատությունների շարքը չի սպառված։ 1958 թվականին հրատարակվելու է Ա. Ղարիբյանի «Նորահայտ բարբառների մի նոր խումբ» աշխատությունը, որը հայ բարբառագիտության մեջ հետաքրքրական նորություն է, քանի որ այնտեղ ուսումնասիրված են ոչ միայն հայերենի մինչև այժմ գիտությանը հայտնի բարբառները, այլև բարբառների նորահայտ հյուսիսային խումբը ևն։ Արարահայտի ճեպագրական կատեգորիաները հայերենում», Ս. Արարահայտի «Ժամանակակից հայերենի լեզվի խոսքի մասերը», Ս. Ղազարյանի «Միջին հայերեն», Ա. Մուրվալյանի «Հայոց լեզվի դարձվածքները և բառի կառուցվածքը», Վ. Ասաբեկ-

յանի «Հայոց լեզվի շարահյուսություն» և այլ աշխատություններ։

Ինստիտուտը առանձնապես լայն գործունեություն ծավալեց վերջին երկու տարում, երբ ձևավորվեց բարձրագույն, հայերենի բացատրական բառարանի, հայոց լեզվի գիտական բերականության և առաջնակարգ նշանակություն ունեցող այլ աշխատանքների ստեղծմանը։ Առանձնապես մեծ թափ ստացավ հայոց լեզվի բարձրագույն ստեղծման գործը, որը հարուստ նյութ է ծառայելու հայագիտական բոլոր ուսումնասիրությունների, առանձնապես հայերենի ուսումնասիրության համար։ Այսօր արդեն այդ բարձրագույն գոյություն ունի։

Քարտարանի ստեղծմանը զուգընթաց, ինստիտուտը ձևավորեց հայերենի բացատրական բառարան կազմելու աշխատանքներին։ Մի խումբ գիտական աշխատակիցների ջանքերի շնորհիվ այսօր արդեն ծրագրից զուրկ կազմված է հայերենի բացատրական երկհատորանոց բառարանը՝ 90 հազար բառի սահմաններում (շուրջ 220 մամուլ ծավալով)։ Այս տարի բառարանի առաջին հատորը պատրաստվելու է տպագրության և կսկսվեն երկրորդ հատորի խմբագրման աշխատանքները։

Հայերենի այս նոր բացատրական բառարանը ունի շատ առավելություններ մինչև այժմ հրապարակի վրա եղած բառարանների համեմատությամբ։ Այն գերազանցապես բնագրվում է մեր երկու դարի լեզուների հայերեն բառերը՝ մեծ մասամբ հեղինակային օրինակներով, բառակապակցություններով ու գործածության արտահայտություններով, որոնք յուրաքանչյուր բառարանի ճշտության և գիտականության միակ գրավականն են։ Այստեղ չեն մտել արդի գրական լեզվում արդեն չգործածվող հին և նեղ բարբառային բառերը, դրա փոխարեն բառարանը բնագրվում է շուրջ բառ հազար այնպիսի նոր բառեր, որոնք լայն գործածություն ունեն և չեն գրանցված ոչ մի բառարանում։ Ծշուժված ու լրացված են շատ ու շատ բառերի նշանակություններ հեղինակային օրինակների հիման վրա։

Արդեն պատրաստված է հայոց լեզվի դարձվածքների հատուկ բառարան, որը կազմված է 19-րդ և 20-րդ դարերի հայ գրողների երկերի օրինակների հիման վրա, բաղկացած էրեք տասնյակ հազարից ավելի դարձվածքներից: Սա իր ծավալով ու ընդգրկումով գերազանցում է նախորդ բոլոր բառարանները, այդ թվում նաև Ս. Ամատունու բառարանը, որ ամփոփում է միայն սակավաթիվ հայ գրողների որոշ երկերում գործածված դարձվածքները (մոտ չորս հազար):

Ինստիտուտում կազմված է յոթնամյա աշխատանքային ծրագրի նախագիծ բոլոր սեկտորների համար: Արդի հայերենի սեկտորը իր հրատարակած և հրատարակելիք աշխատությունների հիման վրա նախապատրաստում է հայերենի գիտական ընդարձակ քերականություն կազմելու աշխատանքները: Աշխատությունը բաղկանալու է երկու մեծածավալ հատորներից, որ գիտական մանրամասնությամբ ուսումնասիրվելու են հայերենի ձևաբանությունն ու շարահյուսությունը: Սրա հետ զուգընթաց հայոց լեզվի պատմության սեկտորը պատրաստելու է հայերենի պատմական քերականությունը, ապա երկու սեկտորների միացյալ ուժերով ստեղծվելու է նաև հայերենի համեմատական քերականությունը: Հիշյալ երեք ուսումնասիրությունները հետագայում հիմք են դառնալու այնպիսի մի աշխատության, որ հայերենի քերականության հարցերը զուգընթացաբար կուսումնասիրվեն գիտական, պատմական ու համեմատական տեսանկյուններից:

Բառարանագրական սեկտորը նախագծել է առաջիկա յոթ տարում կազմելու հայերենի մի շարք նոր բառարաններ, որոնցից առավել կարևորն է լինելու հայերենի ակադեմիական բաղմահ ուր (չորս 15—20 հատոր) բառարանը (այդ բառարանի առաջին հատորը պատրաստ է լինելու հրապարակման 1965 թվականին): Բառարանի աշխատանքների մեջ ընդգրկվելու են 40—45 գիտական և տեխնիկական աշխատակիցներ: Միաժամանակ սեկտորը ձեռնարկում է կազմելու բարբառային բառարան, որ ամփոփվելու են այն բոլոր բարբառային բառերը, որոնք հայ գրականության մեջ երբեք չեն օգտագործվել ևն: Յուրաքանչյուր բառի համար տրվելու են օրինակներ թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ գրական լեզվից: Յոթնամյակի ընթացքում կազմվելու է նաև օտար բառերի բառարան՝ դարձյալ գրական լեզվի օրինակներով, հոմանիշների բառարան, Հ. Թումանյանի համաբարբառը և մի ընդարձակ ուղղագրական բառարան՝ 100 հազար բառի սահմաններում: Երբ հիշյալ բառարանները պատրաստ կլինեն, կձևաարկվի մասնագիտական բառերի ընդարձակ

բառարաններ կազմելու աշխատանքը: Չմոռանանք նշել, որ սեկտորն արդեն սկսել է հայ-ռուսերեն ընդարձակ բառարան կազմելու աշխատանքները:

Ինստիտուտում պետք է ստեղծվի բարբառագիտության առանձին սեկտոր, որ յոթնամյակի ընթացքում ուսումնասիրելու և հրատարակելու է ոչ միայն առանձին բարբառների նվիրված տարբեր մենագրություններ, այլև կազմելու է բարբառագիտական ընդարձակ բարակ, որ տեղ են գտնվում այն բոլոր բնականավորները, որտեղ երբեք չեն ընկնում ևն կամ դեռ այսօր էլ ընկնում են բարբառախոս հայերը, լինի այդ Հայաստանի հողի վրա, թե այլուր:

Ինստիտուտի բարոագրական սեկտորը ծրագրել է առաջիկա յոթնամյակի ընթացքում հայերենի բառարանների թիվը հասցնել 30 միլիոնի՝ երեք միլիոն ընտրվի բարոագրական և բառարանների նյութական հիմք, ինչպես նաև հրաժեշտություն է ներկայացնում ոչ միայն ամբողջ ինստիտուտի, այլև ողջ հայագիտության համար:

Քարտագրական սեկտորը կոչված է հայ գրողների ստեղծագործությունների հիման վրա գրեթե ամբողջ հայոց լեզվի ամբողջ բառագանձը՝ համապատասխան նախադասությունների մեջ, լեզվի զարգացման տարբեր փուլերում (հին, միջին, նոր): Դա իրականացվելու է մեր գրողների երկերի համաբարբառների, ընտրվի ու ընդհանուր բարոագրաններ կազմելու ճանապարհով, իսկ այդ մեծարժեք ու հարուստ նյութի հիման վրա կազմվելու են հայ նշանավոր գրողների լեզվի (բառապաշարի) տարբեր ծավալի բացատրական և այլ տիպի բառարաններ, դրվելու են լեզվական փաստային ուսումնասիրություններ և այլն:

Քարտարանի բառագանձը միանգամայն ակնհայտ կգարձնի այն, թե ինչպիսի տարածում ու գործածություն, իմաստային ինչպիսի նրբերանգներ ու կենսունակություն ունի մեր լեզվի բառապաշարն այս կամ այն գրողի մոտ, միաժամանակ կգրեթե ամբողջ առանձին գրողների բառակազմական ու բառաստեղծական հնարները և նման շատ ու շատ երևույթներ:

Քարտագրական սեկտորը 1957 թվականի ընթացքում մշակել է մի շարք հայ գրողների երկերի համաբարբառները: Այդ երկերից են Բաֆոու «Մամվելը», Մուրացանի «Գեորգ Մարգարեանի», Նար-Գոսի «Մահը», Թումանյանի չափածոն ու արձակը, Հովհաննիսյանի և Կուրդիջյանի բանաստեղծությունները, Դեմիրճյանի «Վարդանանքը», Չարենցի չափածոն, Բակունցի «Երկերը», Պեշիկթաշյանի ու

Դուրյանի տաղերը և այլն (1.500.000 քարոյի սահմաններում)։ Միաժամանակ կատարվել է մի շարք հեղինակների երկերի համարաբաժնի քարտերի բնարտվյուն, ընտրովի բառեր են թողնվել տարբեր հեղինակների ստեղծագործություններից, թերթերից, ամսագրերից և այլն։

Բայց այս աշխատանքը դեռևս սկիզբն է այն մեծ գործի, որ լեզվի ինստիտուտը քարտագրական սեկտորի միջոցով իրականացնելու է մինչև առաջիկա յոթնամյակի վերջը, երբ համարաբաժնի վերածված կլինեն հայ գրողների շատ երկեր։ Դա լինելու է մեր նոր գրական երկու լեզունների ներկայացուցիչների բաժանումը, որ դրսևորելու է մեր լեզվի քարտագրման նոր փուլի բառապաշարի հարուստությունը։ Քարտարանը պետք է արտահայտի

նաև հայոց լեզվի զարգացման հին ու միջին շրջանների բառապաշարը։ Նախատեսվում է միջոցներ ձեռք առնել առաջիկա յոթնամյակի ընթացքում ստանալու Վիեննայի Միախարյանների գրաբարի մեծ քարտարանի լուսանկարները և Նորայր Բյուզանդացու կազմած միջին հայերենի համաբարբառը, որոնք էլ ավելի լրիվ ու ամբողջական կդարձնեն մեր բազմադարյան ու հարուստ լեզվի այդ գանձարանը, որը հիմնադրվել է մեր մայրաքաղաքում, Մատենադարանի կողքին և Մատենադարանի հետ դառնալու է հայագիտության արդյունաշատ և մշտական օջախներից մեկը։

Ա. ՄՈՒՐՎԱԼՅԱՆ

Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱԿԱԳԵՄԻԱՅԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Հայկական ՍՍԻ Գիտությունների Ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանը ծնունդ է առել Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին։ Նրա Գրական բաժինը (որոշ ֆոնդեր նաև արվեստի բաժինը), մասն է կազմել 1922 թվականին Երևանում հիմնված Կուլտուր-պատմական թանգարանի, որն ունեցել է մի քանի բաժանմունք՝ Կերպարվեստի, Պատմական, Գրական, Լեզվագրական։

Գրական բաժնի ստեղծման և հարստացման գործում խոշոր երախտիք ունի բանասեր Ե. Շահազիզը։ Նրա ջանքերով է, որ Ն. Նախիջևանից Երևան են փոխադրվել արժեքավոր և հարուստ մի շարք ֆոնդեր, ինչպես ուսույցիոն դեմոկրատ Մ. Նալբանդյանի, Թափայել Պատկանյանի, Մմրատ Շահազիզի արխիվները, նոր Նախիջևանի մագիստրատի 2000-ից ավելի փաստաթղթեր պարունակող դիվանը և այլն։ Թիֆլիսից, Մոսկվայից և Կովկասի այլ քաղաքներից Երևան են փոխադրվել նաև ուրիշ արխիվներ։ Դրանցով զրվել է ներկա Գրական թանգարանի հիմքը, որը հետագայում գնալով հարստացել է և մեծացել։

Թանգարանի գրական բաժնում պահպանվում են գերազանցապես 19—20-րդ դարերի հայ գրողների, հրապարակախոսների և մշակույթի միջին այլ գործիչների ավելի քան երկու հարյուր արխիվային ֆոնդեր, որոնք պարունակում են հայ կյանքի գրականության մի

շարք արժեքավոր նմուշների ինքնագրերը, անտիպ ստեղծագործություններ, պատմական զանազան վավերագրեր, լուսանկարներ, գրքեր, անձնական գործածության իրեր, գեղարվեստական նկարներ, քանդակներ և այլն։

Ժամանակի ամենակույ ժանրից ազատվելով, մեզ են հասել հայ գրականության խոշորագույն ներկայացուցիչներից մի քանիսի ձեռագրերը, որոնց թվում հիշատակության արժանի է Սայաթ-Նովայի համարավոր «գափտարը»։

Հայ նոր գրականության հիմնադիր Խ. Աբովյանի արխիվը թե՛ իր ծավալով և թե՛ մանավանդ պարունակած նյութերի հասարակական արժեքով ու նշանակությամբ ամենահարուստներից մեկն է։ Այն պարունակում է 783 միավոր, այդ թվում անմահ «Վերք Հայաստանի» վկայի սևագիր և մարքագիր օրինակները, «Աղառու խաղի», Աբովյանի գորպատյան օրագրերի, մի շարք բանաստեղծությունների և արձակ երկերի ինքնագրերը, բազմաթիվ նամակներ, պաշտոնական գրություններ, նկարներ և այլն։ Հարուստ է նաև ուսույցիոն դեմոկրատ Միքայել Նալբանդյանի ֆոնդը, այստեղ հավաքված է 668 փաստաթուղթ, որոնց մեջ են Նալբանդյանի շափածո և արձակ մի շարք գործերի, այդ թվում, «Յաղազ հայկական մատենագրութեան» երկի բնագրերը։ Նալբանդյանի արխիվում են պահվում բանտից գրած նրա հայերեն և ռուսերեն արժեքավոր նա-